

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Լեոնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմը հայտնում է, որ համաձայն «Հիմնադրամների մասին» ԼՂՀ օրենքի 38-րդ և 39-րդ հոդվածների պահանջների, հանրապետությունում գրանցված հիմնադրամները յուրաքանչյուր տարի՝ հաշվետու տարվան հաջորդող մարտի 25-ից ոչ ուշ, պարտավոր են իրենց գործունեության մասին մամուլում հրապարակել հաշվետվություն, որը պետք է պարունակի տեղեկություններ իրականացված ծրագրերի, ֆինանսավորման աղբյուրների, ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափի և դրանցում կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափի, հիմնադրի, հոգաբարձուների խորհրդի անդամների, կառավարչի և հիմնադրամի աշխատակազմում ընդգրկված անձանց անուններն ու ազգանունները, եթե նրանք օգտվել են հիմնադրամի միջոցներից և ծառայություններից հաշվետու տարվա ընթացքում: Հաշվետվությունը հրապարակելուց հետո՝ 15 օրվա ընթացքում, այդ մասին գրավոր ծանուցում են ԼՂՀ արդարադատության նախարարությանը՝ գրությանը կից ներկայացնելով հաշվետվությունը և մամուլի միջոցի օրինակը:

Հիմնադրամների կողմից հաշվետվությունը թերի հրապարակելը, օրենքով սահմանված կարգով և ժամկետներում հիմնադրամների կողմից հաշվետվությունը չհրապարակելը, ԼՂՀ արդարադատության նախարարությանը հրապարակելու մասին չծանուցելը գործող օրենսդրության համաձայն՝ հիմնադրամների պաշտոնատար անձանց նկատմամբ առաջացնում է վարչական պատասխանատվություն:

Լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար դիմել ԼՂՀ արդարադատության նախարարության աշխատակազմ կամ զանգահարել /047/94-92-64 հեռախոսահամարով: